ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
<<Ագարակաձորի Յու.Խաչատրյանի անվան
միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի
Տնօրեն՝ Ն.Հովհաննիսյան
<< >> սեպտեմբերի 2022թ.

Ստուգված է. Համապատասխանում է
պետական ծրագրին
Ուսումնական գծով փոխտնօրեն՝
Ա.Ամիրաղյան
<< 05 >> սեպտեմբերի 2022թ.

Վայոց ձոր մարզի Ագարակաձորի Յու. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

2022-2023ուս. տարի

VI ԴԱՍԱՐԱՆ

Դասղեկ՝ Գ.Գևորգյան

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

VI դասարանում սովորում են 15 աշակերտներ՝ 8 տղա և 7 աղջիկ: Մեկ աշակերտ՝ Բայաթյան Արփինեն, տեղափոխվել է Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց: Դասարանի աշակերտներն ունեն բավարար ընդունակություններ: Ակտիվ են, չարաճճի: Դասարանական կոլեկտիվը միասնական է, աշակերտները պատրաստակամ են միմյանց օգնելու հարցում:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

Դասարանական կոլեկտիվն ամրապնդելու, աշակերտների անձնային որակները զարգացնելու, միմյանց նկատմամբ հանդուժողականություն դաստիարակելու նպատակով կազմակերպել զրույցներ, բանավեճեր, մրցութային միջոցառումներ: Դեռահասության տարիքին համապատասխան հանձնարարել գրքերի ընթերցում, կինոնկարների և արվեստի այլ կոթողների մասին տեղեկությունների ձեռքբերում, այդ թեմաներով քննարկումներ, բանավեճեր, հարցազրույցներ: Կազմակերպել հանդիպումներ հայրենիքի պաշտպանի կամ այլ նշանավոր մարդկանց հետ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Արժեքային համակարգի ձևավորման, ինչպես նաև մշակութային ժառանգությունը փոխանցելու համար կարևոր է հոգևոր դաստիարակությունը: Ուսումնական տարվա ընթացքում անհրաժեշտ է կազմակերպել զրույցներ, էքսկուրսիաներ՝ պատմամշակութային օջախները ճանաչելու նպատակով:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Գեղեցիկը ամենուր է՝ և՛ բնության մեջ, և՛ մարդկանց միջավայրում, անգամ առօրյա իրերի և առարկաների մեջ: Անհրաժեշտ է աշակերտների մեջ որակները դաստիարակել՝ գեղեցիկը տեսնելու և գնահատելու համար:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն Ա*Շատ կարևոր է առողջ հոգին առողջ մարմնում ունենալու հանգամանքը: Այսօրվա ֆիզիկապես կոփված աշակերտը վաղվա զինվորն է, որը պետք է հայրենասիրական որակներ ունենա, պատկերացում ունենա հայրենիքը պաշտպանելու մասին:*

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակությունը իրականցվում է ոչ միայն ֆիզկուլտուրայի դասերին, այլև ողջ օրվա ընթացքում: Կազմակերպել մրցույթներ, սպորտլանդիաներ, հետևել աշակերտների օրվա ռեժիմին, առողջ ապրելակերպին:

3.5 Աշխատանքնային դաստիարակություն

Ամեն ինչ ստեղծվում է աշխատանքով: Ամենօրյա ուշադրության կենտրոնում պետք է պահել շրջապատի մաքրությունը: Աշակերտները պետք է պատրաստ լինեն հանրօգուտ աշխատանքի, հարգանքով լցված լինեն աշխատանքի մարդկանց նկատմամբ:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Միջոցառումները կազմակերպել բնությունը ճանաչելու, բնության վերաբերյալ գիտելիքներով զինվելու նպատակով: Ձևավորել հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ:

3.7 Դպրոց-ընտանիք կապը

Ծնողկոմիտեի անդամների միջոցով ամրապնդել դպրոց-ընտանիք կապը: Հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ, անհրաժեշտության դեպքում կատարել տնային այցելություն:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Շաբաթ-ները	Ուսումն. շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատա-րողներ
	01.09.2022	Գիտելիքի օր	01.09.	
I	05-09.09.	Բանավեճ «Ճանաչում եմ իմ իրավունքները և պարտականությունները» թեմայով	08.09.	
II	12-16.09.	Զրույց «Հակահամաճարակային կանոնների պահպանումը դպրցում» թեմայով	15.09.	
III	19-23.09.	Զրույց «Անկախության գինը» թեմայով	22.09.	
IV	26-30.09	Բանավեճ «Ինչ է ընկերությունը, ով է իսկական ընկերը» թեմայով	29.09.	
V	03-07.10	«Բնությունը մեր աչքերով»	06.10.	
VI	10-14.10.	Զրույց «Ճանաչենք մեր հայրենիքը» թեմայով	13.10.	
VII	17-21.10.	Ազատամարտի հերոսները	20.10.	
VIII	01-04.11	Արցախի հերոսամարտի ընթացքում ծնված երգերի ունկնդրում	03.11.	
IX	07-11.11.	Ինչ եմ սովորել Թումանյանի հեքիաթներից	10.11.	
X	14-18.11.	Զրույց «Մարդկանց լավ և վատ սովորությունները» թեմայով	17.11.	
XI	21-25.11. 28-30.11.	Կազմակերպել խելացիների և հնարամիտների մրցույթ	24.11.	
XII	01-02.12.	Զրույց «Ծնողների դերը իմ կյանքում» թեմայով	01.12.	
XIII	05-09.12.	Զրույց «Իմ սիրած սպորտաձևը» թեմայով	08.12.	
XIV	12-16.12.	1-ին կիսամյակի առաջադիմությունը	15.12.	
XV	19-23.12.	Ծննդյան տոներին և Ամանորին ընդառաջ	22.12.	

Շաբաթ-ները	Ուսումն. շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատա-րողներ
XVI	**09-13.01. 2023թ**	Զրույց «Ինչպես եմ անցկացնում ազատ ժամանակս» թեմայով		
XVII	16-20.01.	Դասարանի շնորհալիները: Ձեռքի աշխատանքների ցուցադրում		
XVIII	23-27.01.	Զրույց «Հզոր բանակ, պաշտպանված հայրենիք» թեմայով		
XIX	30-31.01. 01-03.02.	Ինչ եմ անում տանը՝ ծնողներիս հոգսը թեթևացնելու համար		
XX	06-10.02.	Արցախյան հերոսամարտի մեր գյուղի մասնակիցները: Հանդիպում		
XXI	13-17.02.	Զրույց «Հոգևոր տոներ: Տյառնընդառաջ» թեմայով		
XXII	20-24.02.	Զրույց «Գիրքը յուրաքանչյուրիս կյանքում» թեմայով		
XXIII	27-28.02. 01-03.03.	Գրքի քննարկում		
XXIV	06-10.03.	Նախապատրաստել միջոցառում՝ Մարտի 8-ի վերաբերյալ		
XXV	13-17.03.	Ձևավորել պատի թերթ «Գարնանային գույները» վերնագրով		
XXVI	20-24.03.	Զրույց «Իմ նախընտրած երաժշտությունը» թեմայով		
XXVII	03-07.04	Բանավեճ «Ինչ նվիրել» թեմայով		
XXVIII	10-11.04.	Զրույց «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության խնդիրները» թեմայով		

Շաբաթ-ները	Ուսումն. շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատա-րողներ
XXIX	17-21.04.	Հայկական առածներն ու ասացվածքները		
XXX	21-28.04.	Զրույց «Ինչ գիտեմ Եղեռնի մասին» թեմայով		
XXXI	02-05.05.	Ասույթներ աշխատանքի և աշխատանքի մարդու մասին		
XXXII	08-12.05.	Զրույց «Աշակերտների գործողությունները հնարավոր բնական աղետների ժամանակ» թեմայով		
XXXIII	15-19.05.	Զրույց «Անվանի հայեր» թեմայով		
XXXIV	22-26.05.	Կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների գնահատում: Ինքնագնահատում		